

Թիւ 25624  
Փետրուար 22, 1978

Արժանաշնորհ  
Տ. Գառնիկ Քհնյ. Հալլաճեան  
Հովիւ Ս. Խաչ Եկեղեցւոյ  
Նախագահ Ժխական Խորհուրդի  
Ծունիքն Սիթի.

Սիթիի Տէր Գառնիկ,

Ստացած ենք Փետրուար 21, 1978 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 12ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Էնն Հարատուրեան  
Հերբլա Էզմէլեան  
Փիլիփ Արփիարեան  
Մերի Նալպանտեան  
Ճէք Թազագճեան